

սեղանի վրայ եւս կը պահեն միշտ, գնդերէ՛ գումարտակէ եւ ուրիշ ազնիւ զարդերէ գատ, նաեւ իրենց զէնքերն՝ ըստ վերոյիշեալ վկայութեանց (151), զի անոնց կարեւորութիւնն աւելի էր հոս՝ զինւոյն անակնկալ եւ կամ նախանկատ թելադրութեանց հանդէպ:

14. — Լուսացումն ձեռաց: — Ճաշի արարողութեանց մասերէն մին էր այս, յայտնի Եղիշէի տիկնանց նկարագրէն, եւ կը կատարուէր տաճարին մէջ: Կը բերէին լուացման սպասները, որ է նգոյրն ու տաշտագոյրանը (աստ, 82-6), եւ «նաժիշտ» մ'անոնց «ջուր ի ձեռս արկանէր», եւ օշնակով՝ կը մաքրուէին. իսկ չորնալու համար՝ պատուով «կրտսերք աւագաց դաստառակս մատուցանէին» (Եղիշ. 173), որ յետոյ անձեռոց ալ կոչուեցաւ (Յհ. կթղ. զրչ.²): Չեռաց այս լուացումը, սեպհական ոչ միայն այդ հիւրընկալ տիկնանց, այլ եւ բոլոր կոչնականաց, համոզուած եմ՝ թէ կը լինէր սեղանը սկըսելէ անմիջապէս յառաջ, ըստ որում նոյնպէս կ'ընէին նաեւ Հրեայք (Մտթ. փե, 2. Մրկ. Է, 1-5), Բիւզանդացիք (Ոսկ. Թղթ. Ա, 702) եւ Յոյները (Դար. Ա, 1270, '74),

1. Պրս. ուշնանէն, որ կը նշանակէ «աղային խոտ» (Հիւրշ. 259): — 2. Վրիպած տպագրէն. 214.